ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՓՎ 2018թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի պարոն մարզպետ, պարոն Դավթյան, պարոնայք սպաներ, տիկնայք և պարոնայք.

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԻ նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի ՄՓՎ գործունեությունն ուղղված է եղել մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի կատարելագործմանը և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրների իրականացմանը:

Գործունեության հիմնական ուղղություններն են եղել՝

- Քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության համակարգերի նախապատրաստումը,
- արտակարգ իրավիճակների և դեպքերի արձագանքումը,
- մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայությունը,
- արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումներին, մարզի բնակչության պաշտպանության համակարգի բոլոր մակարդակների ներգրավման ապահովումը,
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերի հրապարակայնությունը,
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով ղեկավար մարմինների և բնակչության ուսուցման կազմակերպումը և իրականացումը,
- կանխագելիչ միջոցառումների իրականացումը,
- հրշեջ-փրկարարական ուժերի պատրաստականության բարձրացումը:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի ՄՓՎ կողմից հաշվետու ժամանակահատվածում հիմնական միջոցառումների պլանով նախատեսված միջոցառումները կատարվել են ամբողջությամբ:

1. ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

2018թ. հաշվետու ժամանակահատվածում Արագածոտնի ՄՓՎ օպերատիվ խումբը և ենթակա ստորաբաժանումները կատարել են 981 ելքեր /2017թ-ին 766/, ելքերի թիվը աճել է 215-ով կամ 21.9 %-ով), դեպքերի հետևանքով զոհվել է 25 մարդ (2017թ-ի 12-ի համեմատ զոհերի թիվը աճել է 13-ով կամ 52 %-ով), մարմնական վնասվածքներ են ստացել (վիրավորվել են) 115 մարդ (2017թ-ի 90-ի համեմատ, վիրավորների թիվը աճել է 25-ով կամ 19.9%-ով):

Գրանցված դեպքերից՝

531-ը՝ **տեխնածին են**, որը կազմում է ընդհանուր դեպքերի 54,1 %-ը, (2017թ.՝ 378, կամ 49,34%-ը), որոնց հետևանքով զոհվել է 17 մարդ, (2017թ.՝ 10), վիրավորվել է՝ 103 մարդ (2017թ.՝ 84): Տեխնածին բնույթի արտակարգ դեպքերը աճել են 153-ով կամ 28,8%-ով, զոհերի թիվը աճել է 7-ով կամ/41,2 %-ով/, իսկ վիրավորների թիվը աճել է՝ 25-ով կամ 21,8 %-ով:

Գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից 389-ը կամ (73,2%-ը) հրդեհի դեպքերն են (2017թ. 275, կամ 72,7%): Հրդեհների թիվը մարզում աճել է 114-ով կամ (18,6%-ով): Հրդեհների հետևանքով զոհեր չկան, այրվածքներ են ստացել 2 քաղաքացի, 2017թ-ին նույնպես այրվածքներ են ստացել 2 քաղաքացի:

Գրանցվել է հսկվող կրակի 10 դեեպք, որը կազմում է տեխնածին դեպքերի 1.9%-ը /2017թ. 6, կամ 1,6%-ը/, հրդեհ չի հայտնաբերվել 45 կանչերի դեպքում, որը կազմում է տեխնածին դեպքերի 8,4%-ը /2017թ 29, կամ 7,7%-ը/, գրանցվել է ծխապատման 13 դեպք, որը կազմում է տեխնածին դեպքերի 2,4 %-ը /2017թ 3, կամ 0,8%-ը /: Այսպիսով հսկվող կրակի դեպքերը աճել են 4-ով, կեղծ կանչերի թիվը աճել է 16-ով, կամ 55.1%, ծխապատման դեպքերի քանակը աճել է 10-ով:

Հրդեհների գերակշռող մասը կազմել են խոտածածկ տարածքների հրդեհները՝ 275 դեպք կամ 70,7 %, 27-ի դեպքում կամ 6,9%-ը հրդեհը ծագել է բնակելի շինություններում, գրանցվել է տրանսպորտային միջոցների հրդեհվելու 15 դեպք, կամ հրդեհների (3,8%-ը), անասնակերի հրդեհի 20 դեպքեր կամ հրդեհների (5,1 %-ը), , բուսածածկ և այգիների 18 դեպք կամ (4,6 %-ը), մյուս 34 դեպքերը կամ դեպքերի 8,7%-ը ծագել են այլ տարածքներում:

Գրանցված տեխնածին արտակարգ դեպքերից 73-ը ավտովթարներն են, որը կազմում է տեխնածին դեպքերի 13,7%-ը, /2017թ 50, կամ 13,2%-ը/: Ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառով զոհվել է 17 մարդ, կամ ընդհանուր զոհերի 68%-ը, /2017թ 10, կամ 83,3%-ը/, վնասվածքներ է ստացել 101 քաղաքացի, կամ ընդհանուրի 87,8%-ը, /2017թ 82, կամ 91,1%-ը/: Ավտովթարների դեպքերը աճել են 23-ով, կամ 31,5%-վ, զոհերի թիվը աճել է 7-ով կամ 28%-ով, վիրավորների թիվը աճել է 19-ով, կամ 16,5%-ով:

ՄՓՎ ՃԿԿ-ում գրանցվել է 58 թունավորման դեպքեր: Թունավորումների արդյունքում տուժել է 61 քաղաքացի, /2017թ-ին՝ գրանցվել է թունավորման 88 դեպք, զոհվել է 2 և տուժել 106 քաղաքացիներ: Թունավորումների դեպքերը նվազել են 30-ով, կամ 34%-ով:

2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անցկացվել են շտաբային ուսումնավարժություններ, օբյեկտային վարժանքներ, հատուկ տակտիկական ուսումնավարժություններ: Բոլոր անցկացված ուսումնավարժությունները ընդգրկել են ինչպես քաղպաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտների հիմնարար հարցերը, այնպես էլ մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման խնդիրները:

Համաձայն 2018թ աշխատանքային պլանի, հաշվետու ժամանակաշրջանում, նախատեսվել և անցկացվել է 1 հրամանատարաշտաբային ուսումնավարժություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանում, 8 շտաբային ուսումնավարժություն, որից 1-ը մարզպետարանում, 2-ը ՄՓՎ-ում, 5-ը համայնքում, 8 հատուկ տակտիկական ուսումնավարժություն կազմակերպություններում, 3 օբյեկտային վարժանք՝ Թալինի, Ապարանի և Ծաղկահովիտի բժշկական կենտրոններում, և 1 ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն Ծաղկահովիտի միջնակարգ դպրոցում:

Մարտի 1-ին ՔՊ միջազգային օրվա և սեպտեմբերի 4-ին ՀՀ ԱԻՆ աշխատակցի օրվա կապակցությամբ հանրակրթական դպրոցներում անցկացվել է 9 հատուկ տակտիկական ուսումնավարժություն և մի շարք դպրոցներում ուսուցչական կազմի կողմից ընթերցվել են

դասախոսություններ: ՓԾ տնօրենի հանձնարարությամբ կազմակերպություններում լրացուցիչ ենթակա ստորաբաժանումների կողմից անցկացվել է 30 հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:

Արագածոտնի ՄՓՎ ՃԿԿ պետ-պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Հ.Դարբինյանը մասնակցել է «Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի անձնակազմի գործողությունները և հնարավոր ջրածածկման գոտու հաշվարկի իրականացումը երկրատեղեկատվական համակարգերի կիրառմամբ» թեմայով ՇՈ-ին:

Արագածոտնի ՄՓՎ ԲՊԲ պետ-պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Դ.Պետրոսյանը, ս.թ ապրիլի 13-ին, ՀՀ Արմավիրի մարզում մասնակցել է <<Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը>> թեմայով ՇՈՒ-ին:

2018թ. սեպտեմբերի 11-13-ը ՄՓՎ անձնակազմը մասնակցել է <<ՇԱՆԹ-2018>> ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությանը:

ՄՓՎ աշխատակիցները տարվա ընթացքում մասնակցել են մարզպետարանում անցկացված բոլոր շտաբային մարզումներին:

Ընդառաջելով «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի խնդրանքը՝ ՓԾ տնօրենի հանձնարարությամբ, ք.Աշտարակում տեղակայված <<Զանգակատուն>> բարեգործական հասարակական կազմակերպությունում 02.11.2018թ. կազմակերպվել և անցկացվել է հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Տարահանում և առաջին օգնության ցուցաբերում>> թեմայով:

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 2018 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1318 հրամանի՝ ՓԾ ՔՊ վարչության կողմից նոյեմբերի 12-ից 16-ը ընկած ժամանակահատվածում ուսումնասիրություն է կատարվել մարզում անցկացված քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման ընթացքում հիայտ եկած թերությունների վերացման ուղղությամբ:

Զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպություններից՝ <<Գնթունիք>> ՍՊԸ-ն ՄՓՎ-ի կողմից ցուցաբերած մեթոդական օգնությամբ կազմել է տնտեսության օբյեկտների կայունության բարձրացման փաստաթղթերի փաթեթը:

ՄՓՎ-ի կողմից մեթոդական օգնություն է ցուցաբերվել Արագածոտնի մարզի 4 խոշորացված /Ապարան, Ալագյազ, Ծաղկահովիտ և Արագածավան/ համայնքներին ՔՊ պլանների կազմելու գործընթացում, ուսումնասիրվել է ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի պլանը և համաձայնեցվել, ինչպես նաև մեթոդական օգնություն է ցուցաբերվել և համաձայնեցվել ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Արագածոտն մասնաճյուղի ՔՊ պլան-ժամանակացույցը:

Աշտարակի ԶԿ-ում ամեն ամիս կատարվել է Ռազմական դրության ժամանակ ՔՊ միջոցառումների իրականացման համար մարզի տարածքում հաշվառած ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների առկայության ճշգրտում՝ պաշտպանության նախարարության կողմից չառգրավվող ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտում:

Տարվա ընթացքում իրականացվել է ապաստարանների պահպանության վիճակի և հակաճառագայթային թաքստոցների տեխնիկական վիճակի և նորմատիվ պահանջներին համապատասխանության ուսումնասիրությունների անցկացում:

4. ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարզային փրկարարական վարչությունում և ստորաբաժանումներում գործում են 1 ինտերնետ կապի միջոց, ինտերնետ կապով գործող 13 հեռախոսահամար, 8 օնլայն տեսանկարահանող հեռախոս, 8 ստացիոնար, 11 շարժական և 32 դյուրակիր ռադիոկայաններ, 4 լարային կապուղիներ:

Լրամշակվել են ազդարարման սխեմաները, որոնցով Մարզի ղեկավար կազմի ազդարարումը իրականացվում է ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխի կրտսեր հրահանգչի միջոցով:

Մարզի համայնքների ազգաբնակչության ազդարարումը իրականացվում է համայնքներում տեղադրված էլ. շչակներով, որոնք միացվում են տեղերից: Արագածոտնի ՄՓՎ-ի և նրա ենթակա ստորաբաժանումների ծառայողների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ թվով 51 էլ. շչակներից աշխատում է միայն 13-ը:

Շչակների օգտագործումը, շահագործումը և պահպանությունը իրականացնում են համայնքների և կազմակերպությունների ղեկավարները:

Շչակներ չունեցող համայնքներում ազդարարումը իրականացվում է շարժական բարձրախոսների և սուրհանդակների միջոցով:

Ըստ հաշվարկների՝ մարզում անհրաժեշտ 129 շչակներից առկա են՝

Ս-40՝ 28 հատ, որից սարքին 1 հատ, անսարք 27 հատ,

Ս-28՝ 7 հատ, որից սարքին 1 հատ, անսարք 6 հատ,

ԼԴ-800՝ 16 հատ, որից սարքին 11 հատ, անսարք 5 հատ,

Պակասում է 78 շչակ, որից ԼԴ-800՝ 78 հատ:

5. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից 2018թ. փետրվարի 12-ին հաստատվել է 2018թ-ի հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից Արագածոտնի մարզի բնակավայրերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատարածքներն ու բնակչությանը, գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ պլան-ժամանակացույցը:

Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 2018 թվականի փետրվարի 27-ին <<Անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում և բնակավայրերում բուսածածկ տարածքների հրդեհների կառավարման ազգային քաղաքականության իրագործման միջոցառումների ցանկից բխող ՀՀ ԱԻՆ միջոցառումների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին>> N 163-Ա հրամանով սահմանված միջոցառումների շրջանակներում Արագածոտնի մարզային փրկարարական վարչության կողմից վերանայվել է անտառային և բուսածածկ տարածքերի առավել մոտ գտնվող համայնքները և մեթոդական օգնություն է ցուցաբերվել այդ համայնքներում կամավոր հրշեջ փրկարարական խմբեր ստեղծելու գործում:

Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2018թ. փետրվարի 5-ի թիվ 17.4/1269 հանձնարարականի՝ ճշգրտվել է ՀՀ Արագածոտնի մարզում գտնվող բազմաբնակարան շենքերի վերաբերյալ տվյալները և սահմանված կարգով ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչություն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի կայացած նիստի N 29.6 /{441118}18(8) արձանագրային հանձնարարականի՝ մարզի 72 համայնքների ղեկավարներին ուղարկվել է գրություն ոռոգման ջրագծերի և սելավատարերի

վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկվել է ձեռնարկել միջոցառումներ ոռոգման ջրագծերում և սելավատարերում աղբ թափելու դեպքերը կանխարգելելու անհրաժեշտության վերաբերյալ:

6. ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակահատվածում ամենօրյա աշխատանքներ են տարվել փրկարարական ուժերի մշտական մարտական պատրաստության պահպանման ուղղությամբ:

ՄՓՎ ստորաբաժանումների միջև անցկացվել է հրշեջ-կիրառական մարզաձևերի մրցումներ:

ՄՓՎ ստորաբաժանումների միջև անցկացվել է մարզական միջոցառումներ՝ վոլեյբոլի առաջնության հաղթող է դարձել Ապարանի թիվ 20 ՀՓՋ, շախմատի առաջնության հաղթող է ճանաչվել ՃԿԿ ՕՀՀ կրտսեր հրահանգիչ Ս.Եգանյանը:

ՄՓՎ և հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների անձնակազմից ընդունվել է մասնագիտական և ֆիզիկական պատրաստության ստուգարքներ:

Պարբերաբար ստուգվել են մարզի հրշեջ-փրկարարական ջոկատների ծառայության կրման ընթացքը: Հսկողություն է իրականացվել հրշեջ ավտոմեքենաների շահագործման և ելքերի գրանցման նկատմամբ:

Աշխատանքներ են տարվել հրդեհաշիջման քարտերի և պլանների լրամշակման ուղղությամբ:

Մարզի տարածաշրջանների օբյեկտներում և կազմակերպություններում կազմակերպվել և իրականացվել է հրշեջ մարտավարական վարժանքներ. տարածաշրջանները սպասարկող ՀՓՋ-ների ուժերով և միջոցներով:

Մարզի անտառամերձ համայնքներում ստեղծված հրշեջ կամավորական խմբերի հետ պարբերաբար անցկացվել են դասախոսություններ <<Անտառային հրդեհների հրդեհաշիջում>> թեմայով:

<<Երկրապահ կամավորականների միության>> միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում, 05.03.2018թ. Սպարապետ Վ.Սարգսյանի ծննդյան օրվա առթիվ Արագածոտնի ՄՓՎ մասնակցել է պատանի երկրապահների երդման արարողությանը:

7.ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՄՓՎ աշխատակիցների կողմից ծառայողական և աշխատանքային գործունեության ընթացքում օրինականության, աշխատանքային և ծառայողական կարգապահության պահպանման նկատմամբ մշտական հսկողություն է իրականացվում, թույլ տրված ծառայողական իրավախախտումների կանխարգելման և բացահայտման համար:

ՄՓՎ ստորաբաժանումների անձնակազմի հաճախելիության, նրանց կողմից աշխատանքային կարգապահության պահպանման նպատակով կազմակերպվել է անակնկալ ստուգումներ:

8.ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակաշրջանում Արագածոտնի ՄՓՎ 156 հաստիքից համալրված է 151-ը կամ 96,8%-ը: Արագածոտնի ՄՓՎ և նրա ստորաբաժանումներում առաջխաղացման է նեկայացվել 10 կրտսեր խմբի ծառայողներ:

Խրախուսման է արժանացել 25 կրտսեր խմբի ծառայողներ՝ ՀՀ ԱԻ նախարարի պատվոգրով, ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի պատվոգրերով, ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի շնորհակալագրով և մեդալներով:

Ծառայության է ընդունվել 14 կրտսեր խմբի ծառայող:

Ծառայությունից ազատվել է 11 կրտսեր խմբի ծառայող:

Մարդկանց անվտանգության և փրկության թեմայով «Արիության համաստեղություն» խորագրով ամենամյա փառատոնի շրջանակներում ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումներից 2018 թվականին <<Լավագույնն ըստ մասնագիտության>> մրցանակաբաշխության անվանակարգերի չափորոշիչներով հաղթողներից <<Լավագույնն ըստ մասնագիտության>> մրցանակաբաշխության անվանակարգերի չափորոշիչներով հաղթողներ են ճանաչվել.

1. «Լավագույն հրշեջ-փրկարարական ջոկատ» անվանակարգում՝ Ապարանի թիվ 20 հրշեջ փրկարարական ջոկատին:
2. «Լավագույն խմբի պետ» անվանակարգում՝ Աշտարակի թիվ 19 ՀՓՋ խմբի պետ, փ/ծ կապիտան Սերգեյ Լյուդվիգի Գրիգորյանին:
3. «Լավագույն հերթափոխի պետ» անվանակարգում՝ Արագածոտնի ՄՓՎ Ապարանի թիվ 20 ՀՓՋ-ի հերթափոխի պետ, փ/ծ ենթասպա Գառնիկ Զարզանդի Պողոսյանին:
4. «Լավագույն հրշեջ-փրկարար» անվանակարգում՝ Արագածոտնի ՄՓՎ Թալինի ՀՓՋ-ի հրշեջ, փ/ծ սերժանտ Հակոբ Վալերիկի Խաչատրյանին:
5. <<Լավագույն լեռնափրկարար>> անվանակարգում՝ Արագածոտնի ՄՓՎ Աշտարակի թիվ 19 ՀՓՋ ավագ հրշեջ՝լեռնափրկարար, փ/ծ ավագ սերժանտ Հայրապետ Սենիկի Հարությունյանին:
6. <<Լավագույն քաղաքացիական ծառայող>> անվանակարգում՝ Արագածոտնի ՄՓՎ ԲՊԲ գլխավոր մասնագետ Սիրանուշ Խաչատուրի Խաչատրյանին:

9.ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳԾՈՎ

ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից 24.01.2018թ. հաստատված <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվող 2018 թվականի հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացման>> ծրագրի, 2018 թվականի փետրվարի 22–ին, մայիսի 22-ին և սեպտեմբերի 12-ին Արագածոտնի մարզի ՔՊ 10 և Աշտարակ համայնքի 5 ծառայությունների ՔՊ շտաբի պետերի հետ անց են կացվել ընդհանուր պատրաստության պարապմունքներ, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին>>, <<ՔՊ ինժիներատեխնիկական միջոցառումների ապահովումը>>, <<Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը, տարահանման մարմինները, դրանց կառուցվածքն ու խնդիրները>>, <<ՀՀ տարածքում ԱԻ առաջացման կամ դրա սպառնալիքի, ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության դեպքում բնակչության ազդարարումն ու տեղեկատվության տրամադրման կարգը, բնակչության գործողությունները ազդարարման ազդանշաններով>> թեմաներով: Մարզպետարանում դասընթացը անցկացրել են Արագածոտնի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ-պետի տեղակալ, փ/ծ փոխ. գ-տ Դ.Պետրոսյանը, ՄՓՎ ԲՊ բաժնի հրահանգիչ, փ/ծ ավ.լ-տ Գ.Ավագյանը և ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Ա.Ճաղարյանը, տարածաշրջաններում համապատասխան ՀՓՋ հրամանատարները: Ընդհանուր թվով պարապմունքներին մասնակցել են 75 ունկնդիր:

Համաձայն ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից հաստատված, <<Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ՊՈԱԿ 2018թ. ուսումնական տարվում ՀՀ

Արագածոտնի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանի, նախատեսված 55 մասնակիցներից դասընթացներին մասնակցել են 32-ը:

ԲՊ բաժնի հրահանգիչ փ/ծ ավագ լեյտենանտ Գ.Ավագյանը ՀՀ ԱԻ նախարարի 30.07.2018թ. թիվ 857 հրամանի 2018թ. հուլիսի 30-ից օգոստոսի 11-ը գործուղվել է ՌՀՄԱԿ <<Անտառային հրդեհների մարումը>> թեմայով վերապատրաստման դասընթացին:

ՀՀ Արագածոտնի մարզի 200 և ավել աշակերտ ունեցող թվով 27 դպրոցներում ստեղծվել և թարմացվել են պատանի հրշեջ-փրկարարական թիմերի կազմը:

Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2017թ. փետրվարի 24-ի թիվ 1745-17 հանձնարարականի, ըստ սահմանված ծրագրի, մարտ ամսին մարզի դպրոցներում կազմակերպվել և իրականացվել են պատանի հրշեջ-փրկարարների մարզական առաջնություններ, մարզային հավաքական թիմ ձևավորելու նպատակով, որի արդյունքում ձևավորվել է մարզային հավաքական թիմ: Հայտերը ներկայացվել է ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ: Համաձայն ՀՀ ԱԻ նախարարի 2017թ. մարտի 27-ի թիվ 337-Ա հրամանի պատանի հրշեջ-փրկարարների մարզային հավաքական թիմը 10.05.18թ. <<Հայաստան>> մարզական միության հասարակական կազմակերպության սպորտային հրապարակում մասնակցել է պատանի հրշեջ-փրկարարների հանրապետական մարզական առաջնությանը, գրավելով 6-րդ տեղը:

ԲՊ բաժնի հրահանգիչ փ/ծ ավագ լեյտենանտ Գ.Ավագյանը ՀՀ ԱԻ նախարարի 09.11.2018թ. թիվ 1348 հրամանի 2018թ. հոկտեմբերի 24-ից-26ը գործուղվել է Լոռու մարզի Ստեփանավան քաղաք <<Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից անցկացվող <<Անօդաչու թռչող սարքերի հեռակառավարում և երկրատեղեկատվական համակարգերի ուսուցում>> թեմայով դասընթացին մասնակցելու:

2018թ. նոյեմբերի 25-26-ը ՃԿԿ ավագ հրահանգիչ փ/ծ մայոր Ա.Ստեփանյանը և ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ փ/ծ մայոր Վ.Հարությունյանը գործուղվել են գ.Աղվերան, մասնակցելու <<Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի կողմից անցկացվող <<Արտակարգ իրավիճակներում առաջին հոգեբանական օգնություն>> թեմայով հրահանգչական դասընթացին:

Ըստ ՄՓՎ պետի կողմից հաստատված պլան-ժամանակացույցի 2018 թվականի ընթացքում Արագածոտնի մարզի /Ապարան, Երնջատափ, Եղիպատրուշ, Շողակն, Լուսագյուղ, Չքնաղ, Ձորագլուխ, Թթուջուր, Վարդենիս, Ջրամբար, Սարալանջ, Ծաղկահովիտ, Լեռնապար, Ծիլքար, Գեղարոտ, Ալագյազ, Միջնատուն, Մելիքգյուղ, Բյուրական, Անտառուտ և Օրգով,/ անտառամերձ համայնքների հրշեջ կամավորական խմբերի հետ ԲՊԲ պետ-պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Դ.Պետրոսյանի և ԲՊԲ հրահանգիչ, փ/ծ ավագ լեյտենանտ Գ.Ավագյանի կողմից անցկացվել է ՀՀ անտառամերձ ու բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից համայնքներում ստեղծված անտառային հրշեջ կամավոր ջոկատների և հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների անձնակազմի հետ <<Անտառային հրդեհների մարման վերաբերյալ>> <<EUROFIRE>> ուսումնական ձեռնարկի ուսուցում:

10.ԲՈՒԺ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2018 թվականի ընթացքում անցկացվել է ՄՓՎ փրկարար ծառայողների բուժ կանխարգելիչ հետազոտություններ (դիսպանսերիզացիա):

11.ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ վերանորոգման են ենթարկվել Աշտարակի ՀՓՋ-ի, ԿԱՄԱԶ 43253 3.2<<ԱԲ40/4>>, ԿԱՄԱԶ 53229 <<ԱԲ8-40>>, <<ԳԱԶ 2705-242>>, Ապարանի ՀՓՋ-ի ԶԻԼ 130 ԱԲ-40, ԶԻԼ 131 ԱԲ-40, ԿԱՄԱԶ ACA 43502, ՈՒՐԱԼ 43203 կունգ, Արագածի ՀՓՋ-ի ԶԻԼ 130 ԱԲ-40, ԶԻԼ 131 ԱԲ-40, ԶԻԼ 131 կունգ, Թալինի ՀՓՋ-ի 2 ԶԻԼ 130 ԱԲ-40 և ԶԻԼ 131 կունգ մակնիշների, ինչպես նաև ՄՓՎ-ի ՎԱԶ 2121407 և ՈՒԱԶ 315142 ավտոմեքենաները: Նշված ավտոմեքենաների վերանորոգման աշխատանքները իրականացվել են ՄՓՎ ուժերով՝ ԹՆԱՎ-ի աջակցությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Արագածոտնի ՄՓՎ անձնակազմի ուժերով, շարունակվում են ՄՓՎ նոր վարչական շենքի և ենթակա ստորաբաժանումների շինարարական աշխատանքները:

Մասնավորապես՝

ՄՓՎ-ում ավարտվել է խոհանոցի շինարարական աշխատանքները, ներկվել և բարեկարգվել է վարչական տարածքը:

Աշտարակի ՀՓՋ-ում բետոնապատվել է ավտոկայանատեղի հատակը և կատարվել կոսմետիկ վերանորոգում, ավարտվել է միջանցքի և ՀՓՋ հրամանատարի աշխատասենյակի 56 մ^2 հատակի սալիկապատման ու աշխատասենյակի կոսմետիկ վերանորոգման աշխատանքները: Տեղադրվել է վարչական տարածքը փողոցից սահմանազատող մետաղյա դարպաս, ինչպես նայև կատարվել է տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Ապարանի ՀՓՋ-ում կառուցվել է ավտոկայանատեղի ՈՒՐԱԼ մակնիշի մեքենայի համար, փոխարինվել է մուտքի փայտյա դռները մետաղեպլաստե դռներով, ինչպես նայեվ կատարվել է տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Թալինի և Արագածի ՀՓՋ-ներում կատարվել է կոսմետիկ վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:

12.ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից 2018 թվականի ընթացքում ընդունվել է 7 իրավական ակտ՝

- 2018թ. փետրվարի 15–ի <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ հաստատված ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության պլանում և ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության պլանի կատարումն ապահովող փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին>> որոշում,
- 2018թ. փետրվարի 28-ի <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N42-Ա և 2017 թվականի փետրվարի 10-ի N 16-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 25-Ա որոշում,
- 2018թ. հունվարի 29–ի <<ՀՀ Արագածոտնի մարզի ՔՊ ծառայությունների ՔՊ պլանները ճշգրտելու մասին>> որոշում:
- 2018թ. փետրվարի 13-ի <<ՀՀ Արագածոտնի մարզում շտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին>> թիվ 20-Ա որոշում:
- 2018թ. սեպտեմբերի 7-ին <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 84-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 99 որոշում,
- 2018 թվականի սեպտեմբերի 26-ին <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ հաստատված ՀՀ Արագածոտնի մարզի ՔՊ պլանի կատարումն ապահովող փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին>> որոշում:

- <<ՀՀ Արագածոտնի մարզպետի 07.08.18 թվականի թիվ 98-կարգադրությունը ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի միջնակարգ դպրոցում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն նախապատրաստելու և անցկացնելու մասին:

13. ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Համաձայն մարզպետի որոշումների և կարգադրությունների, 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճշգրտվել են <<Արտակարգ իրավիճակներում ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլանը>>, մարզի ՔՊ պլանը, ծառայությունների ՔՊ պլանները: Լրամշակվել են մարզի 4, ճշգրտվել՝ 108 դպրոցների ՔՊ պլանները և պլան-ժամանակացույցերը:

ՄՓՎ կողմից մեթոդական օգնություն է ցուցաբերվել Մարզի զորահավաքային առաջադրանք ունեցող 12 կազմակերպություններին՝ տնտեսության օբյեկտների կայունության բարձրացման փաստաթղթերի փաթեթի մշակման կապակցությամբ:

Ի կատարումն <<Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին>> ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի մայիսի 6-ի թիվ 494-Ա և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի մայիսի 18-ի թիվ 498-Ա համատեղ հրամանի պահանջների՝ մինչ օրս Արագածոտնի ՄՓՎ համաձայնեցման են ներկայացրել 98 ուսումնական հաստատությունների պլաններ, որից՝ 86 դպրոցների պլաններ համաձայնեցվել և հաստատվել է, 36 դպրոցների պլաններ ՄՓՎ ԲՊ բաժնի կողմից քննարկվել է և ի հայտ եկած թերությունները ներկայացվել են համապատասխան դպրոցների տնօրեններին: Ուսումնական հաստատությունների պլանները գտնվում են մշակման փուլում, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ճշգրտվել են մարզի 28 դպրոցների ԱՌՆ պլանները:

Համաձայն ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 2017թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1/17.4/14970-17 հանձնարարականի 1 կետի պահանջների, 2018թ. ընթացքում ՄՓՎ ԲՊ բաժնի կողմից համայնքների աղետների ռիսկի կառավարման պլանները մշակելու համար, ցուցաբերվել է մեթոդական օգնություն՝ համաձայն <<Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի օրինակելի ձևը և մշակման ուղեցույցը հաստատելու մասին>> ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1532-Ա հրամանի, թվով 32 համայնքների ղեկավարների:

14.ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված դրական աշխատանքներին զուգահեռ, դեռևս անելիքներ կան միջին և կրտսեր անձնակազմի մասնագիտական և իրավական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ:

Բոլոր համայնքներում և կազմակերպություններում բացահայտված առանցքային թերությունները գալիս են բնակչության պաշտպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի ոչ պատշաճ իմացությունից, համայնքներում և կազմակերպություններում ՔՊ ոլորտի հաստիքային ծառայողի բացակայությունից:

Մարզի տարածքում հրդեհաշիջման համար անհրաժեշտ ջրավազանների և հիդրանտների՝ թվով 9 հատ, որոնցից 2-ը Աշտարակի տարածաշրջանում /2 անսարք/, 4–ը Թալինի տարածաշրջանում /3 սարքին, 1 անսարք/, 3–ը Ապարանի տարածաշրջանում /1 սարքին, 2 անսարք/ ոչ բավարար քանակի պառճառով մեքենաները ջրով լիցքավորելու

համար հաճախ վերադառնում են բազա, որը բերում է հրդեհաշիջման ոչ արդյունավետ կազմակերպման և լրացուցիչ ժամանակի կորստի:

Աշտարակի ՀՓՋ-ում քարշակման համար նախատեսված տրանսպորտային միջոցի բացակայության պատճառով Աշտարակի վարչական տարածքում փրկարարական աշխատանքները կազմակերպվում է Ապարանի և Թալինի ՀՓՋ-ների ուժերով և միջոցներով, որը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում դեպքերին ժամանակին սպասարկման համար:

Ստորաբաժանումները ապահովված չեն անհրաժեշտ սկզբնական հրդեհաշրջման միջոցներով, որոնց առկայությունը կնպաստի լեռնային և անտառային գոտիներում հրդեհների հրդեհաշիջման աշխատանքներում:

ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումներում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը ոչ բավարար է կատարվում, քանի որ ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումները ապահովված չեն անհրաժեշտ քանակի համակարգչային տեխնիկայով և սարքավորումներով:

2015թ հունիս ամսից ՃԿԿ-ի և 911 ծառայության գործարկումից սկսած ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ կրտսեր հրահանգիչները կատարում են 911 ծառայության և ՕՀՀ կրտսեր հրահանգչի ֆունկցիաներ, որը անհամատեղելի է և լրացուցիչ դժվարություններ է ստեղծում դեպքերի սպասարկման և արձագանքման կազմակերպման ժամանակ՝ հատկապես ամռան ամիսներին /հրդեհների ավելացման/ և ձմեռային ամիսներին /արգելափակումների և խցանումների/ ժամանակ: Նշված ժամանակահատվածում ՄՓՎ ՃԿԿ ստացվում է 250-450 հեռախոսազանգեր 5 ֆիքսված և 1 բջջային հեռախոսներից: Ոչ աշխատանքային օրերին և աշխատանքային օրերին 18:00-ից մինչև 09:00-ն հեռախոսազանգերը սպասարկվում է մեկ կրտսեր հրահանգչի միջոցով: Այդ օրերին դեպքերի արձագանքումը, սպասարկումը, տեղեկատվության փոխանցումը ըստ սահմանված կարգի խախտվում է ժամանակային առումով:

2018թ ընթացքում ՄՓՎ պետի հրամանով կազմակերպվել և անցկացվել են գիտելիքների ստուգման ստուգարքներ, որոնց արդյունքում անձնակազմի միջին մասնագիտական գիտելիքները գոհացուցիչ չեն եղել:

15.ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է

1. 2019թ-ին վարչության գործնեությունը նպատակաուղղել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում մարզի վարչական տարածքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործնեության բարելավմանը, ղեկավար կազմի և ՔՊ մասնագետների պատրաստվածության բարձրացմանը:
2. ՈՒղիներ գտնել քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նյութական, տրանսպորտային և տեխնիկական ապահովումն իրականացնելու համար, համայնքներում նախաձեռնել պարզագույն պաշտպանական կառույցների ստեղծման գործընթացը:
3. Մարզի ղեկավար կազմի օժանդակությամբ հասնել մարզի բնակչության ազդարարման համակարգի վերազինմանը՝ ժամանակակից կապի և ազդարարման միջոցների ներդրման միջոցով, կազմակերպել առկա միջոցների խնամքն ու պահպանումը:
4. Մարզի ղեկավար կազմի օժանդակությամբ ուղղիներ գտնել համայնքների տարածքում հրդեհաշիջման համար անհրաժեշտ ջրավազանների կառուցման և հիդրանտների տեղադրման համար:
5. ՈՒղիներ և միջոցներ գտնել մարզային փրկարարական վարչության շենքի վերանորոգման և տեխնիկական վերազինման, անհրաժեշտ գույքով ապահովման ուղղությամբ:

6. Փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները, ինչպես նաև հանձնարարականները և հրամանները ավելի արագ և օպերատիվ կազմակերպելու նպատակով առաջարկում եմ՝

6.1 Աստիճանաբար թարմացնել և վերանորոգել ստորաբաժանումների հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների պարկը, հատկատես Աշտարակի ՀՓՋ-ում քարշակման համար հատուկ տեխնիկա տրամադրելու ուղղությամբ, իսկ Թալինի ՀՓՋ-ում ջրատարի:

6.2 Ստորաբաժանումներին հատկացնել անհրաժեշտ քանակի սկզբնական հրդեհաշրջման միջոցներ:

6.3 ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումներին հատկացնել համակարգչային տեխնիկա և սարքավորումներ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը կանոնակարգելու նպատակով:

6.4 Համալրել ՄՓՎ ՃԿԿ-ն նոր հաստիքներով 911 ծառայության խնդիրները լիարժեք կատարելու համար:

7. Չնայած վերը նշված խնդիրներին, Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունը պատրաստ է կատարելու իր առջև դրված խնդիրները:

Պետ՝ փ/ծ գնդապետ Կ.Մարգարյան